Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[75666]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Հրավիրվածներ ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Խ. Ավալյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական
Կ. Բաղալյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ս. Մելիք-Յոլչյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ֆինանսական իրավաբանական բաժնի պետ

1. Աուդիտի խորհրդատուի ընտրության արդյունքների հաստատում

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել աուդիտի խորհրդատուի ընտրության արդյունքները՝ հաղթող ճանաչելով «SOS Audit» կազմակերպությանը.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Բաղալյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել «SOS Audit» կազմակերպության համապատասխան մասնագետների մասին մանրամասն տեղեկատվություն (աշխատողների թվաքանակը՝ անուններով և ազգանուններով, աշխատանքային ստաժերը, մասնագիտական կարողությունների բնութագրերը՝ արտահայտած մարդ/օր-ով):

2. Երևան-Արարատ ճանապարհի մաս կազմող՝ Երևան-Արտաշատ 19 կմ ճանապարհային հատվածի նախագծի փոփոխությունների հետ կապված «ԷՋիսԲիսիոմ» կազմակերպության հետ լրացուցիչ համաձայնագիր կնքելու և Երևան-Արարատ ճանապարհի մաս

կազմող Արտաշատ-Արարատ հատվածի նախագծի լրամշակման խորհրդատուի ձեռքբերման առաջարկությունների մասին

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հավանություն տալ՝

1) Երևան-Արարատ ճանապարհի մաս կազմող՝ Երևան-Արտաշատ 19 կմ-ոց ճանապարհային հատվածի նախագծի փոփոխությունների մասով «ԷՋիսԲիսիում» կազմակերպության հետ լրացուցիչ համաձայնագրի կնքման առաջարկությանը.

2) Երևան-Արարատ ճանապարհի մաս կազմող՝ Արտաշատ-Արարատ 19 կմ-ոց հատվածի նախագծի լրամշակման խորհրդատուի ձեռքբերման առաջարկությանը:

3. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի Վերաբնակեցման մասնագետի և Շահառուների հետ խորհրդակցությունների և հասարակայնության հետ կապերի մասնագետի թափուր հաստիքների համալրման մրցույթ հայտարարելու վերաբերյալ

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի Վերաբնակեցման մասնագետի և Շահառուների հետ խորհրդակցությունների և հասարակայնության հետ կապերի մասնագետի թափուր հաստիքների համալրման նպատակով մրցույթ հայտարարելու վերաբերյալ առաջարկությանը.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Բաղալյանին՝ ապահովել թափուր հաստիքների համալրման մրցույթի սահմանված կարգով կազմակերպման ու անցկացման գործընթացը:

4. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակում օտարման ենթակա հողի և գույքի ճշգրտման և գնահատման

խորհրդատվական ծառայությունների իրականացման պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում օտարման ենթակա հողի և գույքի ճշգրտման և գնահատման խորհրդատվական ծառայությունների իրականացման պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությանը:

5. Առաջին Տրանշի և 2-րդ և 3-րդ Տրանշների նախագծող խորհրդատուի՝ «ԷջիսԲիսիում» կազմակերպության կողմից պայմանագրի փոփոխության կարգադրագրի ընդունման մասին

(Ս. Մելիք-Յոլչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Տրանշի 1-ի և 2-րդ ու 3-րդ Տրանշների նախագծող խորհրդատուի՝ «ԷջիսԲիսիում» կազմակերպության կողմից պայմանագրի փոփոխության կարգադրագրի ընդունման առաջարկությանը:

6. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի քարտուղարի նշանակում

(Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել առաջարկություն՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի քարտուղարի նշանակման վերաբերյալ:

7. 2011 թվականի ապրիլի 5-ին կայացած՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նիստում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

2. Հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ ապահովել Երևան-Արարատ 38 կմ-ոց ճանապարհի հատվածի շինարարական աշխատանքների հանդիսավոր մեկնարկը:

3. Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Բաղալյանին՝

1) հաջորդ խորհրդի նիստում ներկայացնել առաջարկություն՝ 2011 թվականի ապրիլի 5-ին կայացած՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նիստի 3-րդ հարցով տրված հանձնարարականի ժամկետի երկարաձգման վերաբերյալ.

2) այսուհետ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նիստերում տրված հանձնարարականների կատարման ժամկետների երկաձգումները դարձնել օրակարգային հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ